ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«19» նոյեմբերի 2019 թվականի N:303 ք.Գյումրի

ՀՐԱՅՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի 2019 թվականի նոյեմբերի 13-ի N 02-234 գրությունը և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2019 թվականի նոյեմբերի 18-ի զեկուցագիրը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Հրայր Կարապետյանին 2019 թվականի նոյեմբերի 20-ից 22-ը ներառյալ գործուղել քաղաք Երևան՝ «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ «Հանրակրթական դպրոցի ավարտական քննությունների կազմակերպման և զարգացման հեռանկարները» և «Բուհերի ընդունելության մրցույթի կազմակերպման հեռանկարները» թեմաներով սեմինար-խորհրդակցությանը մասնակցելու նպատակով:
2. Գործուղման տևողությունը երեք օր՝ 2019 թվականի նոյեմբերի 20-ից 22-ը ներառյալ:
3. Հրայր Կարապետյանի՝ գործուղման գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության կրթության բաժնի պետ Գևորգ Ղումաշյանին:

4. Հրայր Կարապետյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է